№ 3 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 9 **1892** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 9 № 3

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ԿՈՂՄԻՑ

Զբօրհնէքի օրը ժամանակաւոր կամուրջի խորտակումը խորին ցաւով պէտք է ասել՝ չանցաւ առանց մարդկային զոհերի։ Մի քանի ընտանիքներ կորցրին իրանց տան գլուխները, իրանց կերակրողները։

Ձանաչելով ազգաբնակութեան զգայուն գացմունքները դէպի ամեն տեսակ բարեգործութիւն, ես իմ պարտաւորութիւնս եմ համարել բաց անել դրամական հանգանակութիւն քաղաքային վարչութեան մէջ յօդուտ կործանվածների ընտանիքների։

Նուիրատուութիւններն ընդունվում են քաղաքային վարչութեան դիւանատանը ամեն օր մինչև ցերեկվայ 2 ժամը։

1—3

Открыта подписка на **1892 г.** (сорокъ седьмой годъ изданія)

НА ГАЗЕТУ

„КАВКАЗЪ.“

Редакторъ-издатель Ю. Н. МИЛЮТИНЪ.

Съ 1-го января наступающаго года газета «Кавказъ» переходитъ въ руки новой редакціи и будетъ издаваться по расширенной программѣ и при обновленномъ составѣ сотрудниковъ. Главной ея задачей будетъ служить интересамъ Кавказскаго края и его населенія, а также интересамъ Россіи на Востокѣ.

Для сообщенія возможно полныхъ и точныхъ свѣдѣній газета будетъ имѣть корреспондентовъ во всѣхъ губерніяхъ и областяхъ Кавказа, въ важнѣйшихъ мѣстностяхъ Закаспійскаго края и Туркестана, въ Поволжьѣ. въ Харьковѣ, Одессѣ и другихъ городахъ, а также нѣсколькихъ спеціальныхъ корреспондентовъ въ С.-Петербургѣ, и Москвѣ; а за границею газета «Кавказъ» будетъ имѣть корреспондентовъ въ Азіятской Турціи, Персіи, средне-азіатскихъ ханствахъ и другихъ странахъ Востока, а изъ европейскихъ мѣстностей—въ Парижѣ, Лондонѣ и Константинополѣ. Помѣщаемыя корреспонденціи будутъ касаться какъ политической и общественной жизни, такъ равно и торгово-промышленной.

Газета «Кавказъ» будетъ выходить ежедневно (кромѣ дней, слѣдующихъ за большими праздниками).

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Съ доставкою въ Тифлисѣ.		Съ перес. по Имперіи.		По почтовому союзу.	
На годъ.....	11 р. 50 к.	На годъ.....	13 р. — к.	На годъ.....	18 р. 40 к.
„ ½ года...	6 „ — „	„ ½ года...	7 „ — „	„ ½ года...	10 „ — „
„ 3 мѣсяца .	3 „ 50 „	„ 3 мѣсяца .	4 „ — „	„ 3 мѣсяца .	6 „ — „
„ 1 мѣсяцъ .	1 „ 50 „	„ 1 мѣсяцъ .	1 „ 75 „	„ 1 мѣсяцъ .	2 „ — „

Разсрочка допускается для годовыхъ подписчиковъ по соглашенію съ редакціей, причемъ иногородными вносится 3 р. при подпискѣ и по 2 р. къ первымъ числамъ марта, мая, іюля, сентября и ноября; городскими—въ тѣ-же сроки: 3 р., 2 р., 1 р. 50 к., 1 р. 50 к. и 1 р. 50 к.

Подписка принимается въ конторѣ газеты «Кавказъ» (Тифлисъ, Пушкинская, № 12, д. Бабанасова).

2—3

Վարվարա Մինասեան, Դաւիթ, Նունէ Յովհաննիսեան և Հռիփսիմէ Համբարձումեան Սերեբրակեանները և Մարիամ Յովհաննիսեան Ամբարդանեան սրտի ցաւով յայտնելով—առաջինը իր ամուսնու, երկրորդը, երրորդը և վերջինը իրանց հօր, իսկ չորրորդը իր սկեսր՝ նաղվօրնի սովհանիկ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱԻԹԵԱՆ ՍԵՐԲԵՐԱԿԵԱՆԻ մահը, խնդրում են աղգականներին և ծանօթներին շնորհ բերել յուղարկաւորութեան հանդիսին այսօր, հինգշաբթի, յունվարի 9-ին, ժամը 10-ին, թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցու դաւթից դէպի Մէյդանի սուրբ Գէորգ կաթողիկէ եկեղեցի։

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ո՞վ է մեղաւոր. Ժողովրդական ազետ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Էջմիածնի սինօդի օրագրութիւններից. Թիֆլիսի քաղաքային վարչութեան կողմից. Թիֆլիսի հայոց կօնսիստորիայի կողմից. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Եմէնի խռովութիւնները. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՈՎ Է ՄԵՂԱՒՈՐ

Ամբողջ Թիֆլիսի հայ ազգաբնակութեան համար երբէք չի մոռացվի ներկայ 1892 թւի յունվարի 6-ին պատահած ազետը։ Ծնունդի և Մկրտութեան տօնի օրը՝ մեռելոց է դարձել Թիֆլիսցիների համար...

Եւ ոմ մեղաւորութեամբ։ Հոգևոր իշխանութիւնը մի խախուտ կամուրջ է շինել տալիս, յանձնելով նրա շինութեան կապալը մի քահանայի, շինել է տալիս առանց Թոյլտուվութիւն ստանալու քաղաքային վարչութիւնից մի այնպիսի փայտեայ կամուրջ, որի վրայով ջրօրհնէքի օրը ժողովուրդը հազարներով պիտի անցնի։ Իսկ քաղաքային վարչութիւնը թէև Թոյլտուվութիւն չէ տալիս կամուրջ շինելու, բայց մի և նոյն ժամանակ և չէ արգելում շինած կամուրջի գործադրութիւնը, իր արգելքը չէ դնում թերի և խախուտ շինութեան վրա, ինքն քաղաքագլուխը կամ ուղարկում իրանցից մի ճարտարապետ զննելու համար այն կամուրջը, որով յունվարի 6-ին քաղաքի բնակիչները հազարներով պիտի անցնեն...

Ո՞վ է մեղաւոր. Թող վճռէ արդէն ըսկսված դատաստանական քննութիւնը... Զայրացած հասարակաց կարծիքը պահանջում է, որ մեղաւորները պատժվեն, որքան էլ բարձր դիրք ունենան նրանք հոգևորական թէ աշխարհական երարխիայում։

Ժողովրդի լացը, ի հարկէ, չի սրբվի այդ արդար պատժով, բայց առած պատիժը գոնէ օրինակ կը լինի միւս մարդկանց համար, որոնք չեն մտածում հասարակաց շահերի, ժողովրդի կարիքների մասին, այլ միայն իրանց անձի, իրանց դրպանի և իրանց փորի մասին։

Այո, և ուղիղ այն ժամանակ, երբ ժողովրդի բազմաթիւ դիակները երկաթնեղով ձկների պէս էին որսում կուր գետի ալիքներից՝ նոյն ժամանակ առաջնորդարանում Մամբրէ եպիսկոպոսին սեղանակից էին լինում բազմաթիւ պատւաւոր հիւրեր, որոնք ճոխ նախաճաշիկ էին անում ու գինու թասերը ձեռքերին միմեանց շնորհաւորում էին Ծնունդ և Մկրտութիւն...

Ժողովուրդը, որն այդ տեսաւ պատուհասներից՝ զայրացած ուզեց մտնել առաջնորդարանը և այդպիսով իր ներկայութեամբ բողոքել հայ ինտելիգենտների և մեծամեծների անսիրտ վարմունքի դէմ, բայց, բաղդաւորաբար, ոստիկանութիւնը արգելք եղաւ ժողովրդի զայրոյթի յայտնվելուն առաջնորդարանի սրահներում...

Սակայն թողնենք այդ բոլորը և մտածենք այժմ թշուառներին օգնելու մասին։ Օգնենք խեղդվածների, անհոգութեան այդ զոհերի մնացած ընտանիքներին։

Մենք պատրաստ ենք ընդունել նուէրները այդ նպատակով, և հրաւիրում ենք ցանկացողներին իրանց կարողութեան չափ մասնակցել այդ բարի գործին։ Եթէ ուրիշները չեն կատարում իրանց պարտաւորութիւնը, գոնէ մենք ցոյց տանք թէ գիտենք կատարել մեր մարդկային պարտաւորութիւնները։

Գ. Ա.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՂԵՏ

Ջրօրհնէքից սկսած Թիֆլիսի ամբողջ խօսակցութեան նիւթը յունվարի 6-ի ազետն է։

Այդ օրը, մօտ 20 հազար հոգուց բաղկացած ժողովուրդ, հաւաքված վանքի դաւթում, մտնում էր Մկրտութեան օրը։ Ըստ սովորութեան՝ խաչը ջուր պէտք է գցէին կուր գետի մեծ ճիւղի մէջ։ Այդտեղ գնալու համար շինվում է փայտէ ժամանակաւոր կամուրջ, որը միացնում է վանքի բազը Մատաթեան կղզու հետ, կարելով կուրի փոքր ճիւղը։

Ժամը 12-ին հանդիսաւոր գնացքը, ամբողջ հոգևորական դասով, անցաւ կամուրջը, և խաչը ջուր գցելուց յետոյ վերադարձաւ դէպի եկեղեցի։ Դեռ նոր էր եկեղեցի հասել հոգևորական դասը, որին հետևում էր բազմութիւնը, երբ լսվեց մի սաստիկ թնդոց։ Այդ թնդոցին հետևեց մի սարսափելի բացականչութիւն՝ „կամուրջը կոտրվեց“։

Մի վայրկեանում ամբոխը խռնվեց գետի ափին։ Անննկարագրելի էր տեսարանը։ Կամուրջը մէջտեղից կոտրված էր, 3 սաժէն երկարութեամբ և մօտ 500 մարդ, ահագին գերանների և տախտակների հետ միասին թափվեցան ջրի մէջ։ Այդտեղ, ներքեւում, մարդիկ յուսահատ կերպով կռւում էին ալիքների հետ, օգնութիւն աղերսելով, իսկ վերևում ամբողջ բազմութիւնը, մանաւանդ կանայք, բարձրացրին աննկարագրելի լաց ու կոծ....

Սկզբում խեղդվողներին օգնութեան հասան այն ձիաւորները, որոնք սովորութիւն ունեն ձիով գալ Մկրտութեան հանդիսին։ Դրանք ջրի առջև կանգնած, թոյլ չէին տալիս, որ հոսանքը մարդկանց քշի։ Միւս կողմից սկսվեց խեղդվողներին ազատելը։ կէս ժամից յետոյ վրա հասան փրկող նաւակները և ապա հրդեհաշէջների մի խումբ՝ չանգալներով։

Սկսվեց մի աւելի սոսկալի տեսարան։ Անկարելի է, այո՛, մոռանալ, թէ ինչպէս միևը միւսի ետևից՝ հանում էին անշնչացած դիակները՝ պատանիների և ծերերի։ Սկզբում հանածների մի մասը կարելի եղաւ ուշքի բերել։ Իսկ վերջինները մեծ մասամբ արդէն մեռած էին։ Մինչև երեկոյեան ժամի 5-ը հանվեց 40 դիակ, որոնք մեծ մասամբ տեղափոխվեցան հիւանդանոցները։ Մօտ 60 հոգի էլ բաւական վնասվել էին՝ մրսած, կամ զանազան վէրքեր ստացած լինելով։

Երբ կամուրջի կործանման առաջին ծանրը տպաւորութիւնն անցաւ, ժողովուրդը սկսեց տրտունջ յայտնել, որ ոչինչ օգնութիւն չէ հասցնվում դժբաղդներին։ Զրից հանած կիսամեռ թշուառներին պատսպարելու մօտիկ տեղ չէր կար։ Առաջնորդարանը կարգադրութիւն չարաւ, որ սենեակները բանան՝ նրանց գէթ մի քանի ժամ պատսպարելու համար։ Առհասարակ հոգևորական դասը, որը իր ներկայութեամբ կարող էր սիրտ տալ յուսահատ ամբոխին, ոչ մի ներկայացուցիչ չուներ վանքի բակում. նրանք ամենքն էլ գնացել էին տուն օրհնելու. իսկ նորին սրբազնութիւն Մամբրէ եպիսկոպոսը այդ միջոցին առաջնորդարանի սենեակներում տօնի առիթով շնորհաւորութիւններ էր ընդունում և հիւրասիրում իր հիւրերին։

Մինչև ուշ գիշեր վանքի բազը լի էր ահագին բազմութեամբ։ Ամբողջ քաղաքը կսկիծի մէջ է, և դրա հետ միասին կատաղի բողոք է յայտնում այն մարդկանց դէմ, որոնք կամուրջի շինութեան գլուխ են եղել կանգնած և իրանց անհոգութեամբ այդ դժբաղդութեան պատճառ են եղել։

Երևում է, որ Մամբրէ եպիսկոպոսի յանձնարարութեամբ, կամուրջի շինելը կապալով է եղել առած մի տէր-Կոստանդին անունով քահանային և ոչ ոքին քննել էլ տալով, կօնսիստորիան ընդունել է կամուրջը....

Դատաստանական քննութիւնը սկսված է։

Այդ սարսափելի ազետի բոլոր մանրամասնութիւնները շուտով պէտք է բացվեն։ Հասարակաց զրգռված կարծիքը բաւարարութեան է սպասում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Պաշտօնական «Արարատ» ամսագրում տպագրված է Սինօդի օրագրութիւններից հետևեալ քաղուածքը, որ առաջ ենք բերում բառ առ բառ։

«Հոկտեմբերի 8-ին Սինօդում զեկուցվեց։ Հանգուցեալ Հայրապետի կոնդակի (30 նոյեմբ. 1887 ամի, թ. 598) համաձայն Սինօդս օրագրով (7 դեկ. 1887 թ.) կարգեց Պետրոս Սիմէոնեանցին մշանջենաւոր գործակից խմբագրի «Արարատ» ամսագրի տարեկան 600 ռուբլի ռոճկով։ Կաթուղիկոսի մահից յետոյ պ. Սիմէոնեանցը 29-ին ապրիլի յայտնում է Սինօդին գրով թէ. «ի Տէր Հանգուցեալ Հայրապետեան Ազգիս և հոգևոր հայրն իմ Տ. Մակար հրաւիրելով ինձ Ս. Աթոռս կարգեց գլխաւոր գործակից «Արարատ» ամսագրոյ։ Դառնագոյն մահուամբ Նորին Սրբութեան, ըստ իմս կարծեաց, դադարում է և իմ ստանձնեալ պաշտօնս, որոյ գործադրութիւնն անմիջապէս կախված էր Նորին Օծութեան վստահութիւնից։ Այժմ Սրբազան Սինօդիդ կը ճնայ առնել տնօրէնութիւն ապագայի համար ըստ այսմ առարկայի»։ Լսելով Սինօդը այս յայտարարութիւնը, յունիսի 24-ի օրագրութեամբ վճռեց՝ թէ Հանգուցեալ Հայրապետի կոնդակի համաձայն կարող է պ. Փ. Սիմ. նաև այսուհետև չարունակել իր պաշտօնը։ Այս օրագրին ստորագրեցին Սուքիաս, Ներսէս և Արիստակէս Դաւթեան եպիսկոպոսները։ Սակայն, որովհետև այդ օրագրութիւնը չէր հաստատված Տ. Տեղակալի ստորագրութեամբ՝ Պրոկուրորի պաշտօնը կատարողը Ս. Փիլիպպոսեանց վերադարձրեց օրագիրը յայտնելով իր անհամաձայնութիւնը նոյն ամսի 26-ի գրութեամբ։ Յուլիսի 12-ին նոր առանձին օրագրութեամբ որոշվեց առաջին օրագրութիւնը ստորագրողների կողմից, ձայների առաւելութեամբ ի կատար ածել պրոկուրորի անհամաձայնութեամբ վերադարձած օրագիրը, մի օրինակ այս վճռական օրագրից ուղարկելով Նորին Գերազնութեան (պրոկուրորին)։ Առաջ քան այս որոշման կատարումը Սիմէոնեանցը յունիսի 20-ին խնդրել էր Սինօդից տալ իրեն քառամսեայ արձակուրդ Թիֆլիս գնալու բժիշկներին այցելութեան, յայտնելով որ չորս ամսւայ «Արարատի» նիւթ յանձնել է խմբագիր

Որթաղեղի (Սիսիա. նահ.) Ղոմ գյուղ. Նոյեմբերի 22-ին ու. Մխիթարյանցների տասնօրեայ հոգեհանգստի կարգադրությամբ, որի համար Որթաղեղի եւ մերձակայ գյուղերի ժողովուրդը մեծ թվով էր հավաքվել, ես ունեցա առիթ ներկա գտնվելու հետեւյալ հոգեհանգստին։

Ս. Ներսիսեան Մարաշցի վարժարանի 29-րդ տարեմուտի առթիւ կազմակերպուած հոգեհանգստի կարգադրութիւնը ստանձնած էր Որթաղեղի ժողովրդական ընթերցարանը։ Ս. Ներսիսեան վարժարանի ուսուցչական անձնակազմը, որ ներկայ էր հոգեհանգստին, ունէր իր դրօշը։ Ընթերցարանի դրօշի հետ միասին ներկայ էին նաեւ Որթաղեղի ազգային դպրոցի դրօշները։ Ս. Ներսիսեան վարժարանի դրօշը կրում էր սեւ ժապաւէն։

ԴՎՎՓՎՍՈՂՏ ԴՎՃՈՏՅՈ

ԵՐԵՎԱՆՎՎՓՎՄՈՎ ՎԱՏՎՈՒՄ

Ցարեվի 6-ի վաղուց սկսած հսկայական ձյունը մինչև այսօր չի դադարում։ Ամբողջ Երևանը ձյան մեջ է թաղված։ Ամենուրեք ձյան բարձր կույտեր են կազմվել։ Ամենաանանցանելի վայրերում ձյան բարձրությունը հասնում է 2 արշին։ Ձյան պատճառով ամբողջ քաղաքային տրանսպորտը կանգ է առել։ Ոչ մի տրամվայ չի գնում։ Ոչ մի ավտոմեքենա չի երևում։ Ձյան պատճառով ամբողջ քաղաքային կյանքը կաթվածահար է եղել։ Ամենուրեք ձյան մեջ խրված ավտոմեքենաներ են

չինելիս, որոնցից գաւառներում պէտք է կառուցվեն մինչև 100 հատ։

ՊԱՐԻԶ, 6 յունվարի։ Դքսուհի Անաստասիա Լէյխտենբերգսկայա, ծնեալ Իշխանուհի Ջերնոգորիայի, երէկ մի աղջիկ բերեց։

ՎՕՐՕՆԵԺ, 6 յունվարի։ Սովատանջ վերխօտիչանկա գիւղում, կալուածատիրուհի Շիխտինգ գիւղացիների համար հիմնեց ձրի ճաշարան, ճաշ տալով գիւղացիներին և սերմացու ու խոտ անասունների համար։

ՏԱՄԲՕՎ, 7 յունվարի։ Նահանգապետը չրջաբերականով յայտարարել է նահանգի բոլոր վոլոստնոյ վարչութիւններին, որ գիւղացիներին գանձարանից ոչինչ ուտելեղէն չէ տրվում, բայց իւրաքանչիւր կարօտեալին պարտքով տրվում է ամիսը 30-ական ֆունտ հաց, և որ ոչ մի գիւղացի չի ստանայ դէմստվոյից այդ օգնութիւնը, մինչև որ դէմստվոյի վարչութեան անդամը, կամ դէմստվոյի կառավարիչը տեղն ու տեղը չի ստուգի կարօտեալների ցուցակը։

ՎԻԵՆՆԱ, 7 յունվարի։ կայսրի փեսայ էրցհերցոգ Կարլ Սալվատօր, կէսօրից յետոյ վախճանվեց ինֆլուէնցայից։

ՊԱՐԻԶ, 7 յունվարի։ Մարօկկոյի անկարգութիւնների վերաբերմամբ պատգամաւորների ժողովում եղած հարցապնդման ընթացքում, որ մի քանի պետութիւններ Տանժէրի ջրերն են ուղարկել իրանց նաւերը, և որ Ֆրանսիայի ներկայացուցչին հրամայված է Ֆրանսիական զօրքը պատրաստ իջեցնել այն դէպքում, երբ եւրօպացիներին վտանգ կը սպառնայ, կամ երբ ուրիշ պետութիւններ իրանց զօրքերը պիտի կիջեցնեն։ Ընթացքում, յոյս ունի, որ չօտով կարգը կը վերահաստատվի և որ նաւերը կարող կը լինեն հեռանալ Տանժէրի ջրերից։ Պատահարութիւններ։ Հարցը պարզված է։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունվարի 7-ին

Լօնդօնի վրա	10 ֆունտ արժէ	101	ր. 50 կ
Բերլինի վրա	100 մարկ —	49	› 80 ›
Պարիզի վրա	100 ֆրանկ —	40	› 25 ›
Ոսկի —	— արժէ	8	› 20 ›
Մաքսային կուպօնները	—	14	› — ›
Արծաթ	— —	1	› 19 ›
Բօրսային դիսկօնտները	—	6½	› 7½%
Պետ. բանկի 5% տոմս	1 չրջանի	102	› 75 ›
— — — —	2-րդ —	102	› 75 ›
— — — —	3-րդ —	—	› — ›
— — — —	4-րդ —	—	› — ›
— — — —	5-րդ —	—	› — ›
— — — —	6-րդ —	102	› 25 ›
6% ոսկեայ բէնտա		166	› — ›
4% ոսկեայ փոխառութիւն		—	› — ›
Արևելեան 5% փոխառ.	1-ին չրջ.	—	› — ›
— — —	2-րդ —	102	› 50 ›
— — —	3-րդ —	102	› 75 ›
Ներքին 5% առաջին փոխառութ.		235	› — ›
— — երկրորդ	—	223	› — ›
Պետական. երկաթուղային բէնտա.		103	› 50 ›
5½ բէնտա		—	› — ›
4% ներքին փոխառութիւն		95	› — ›
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի		102	› 50 ›
Ազն. կալ. բանկի խաղարկութեան գրաւ. թղթ.	— —	198	› — ›
5½% վկայակ. գիւղ. հող. բանկի.		105	› — ›
4½% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մեծալ.		152	› — ›
— — —	թղթադ.	102	› 50 ›
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.		100	› 75 ›
Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ.		100	› 62 ›
Օդէսայի — —		101	› 75 ›
Թիֆլիսի — —		—	› — ›
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.		—	› — ›
— — Քուրսկի	—	—	› — ›

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՆՋԵԼԻ ՁԵՒՆԱՐԿ առևտրական հաշւարարութիւնը առանց ուսուցչի օգնութեան ուսումնասիրելու համար։

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇԻԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տոկոսների լիակատար աղիւսակներով, 1-ից մինչև 10.000 րուբ. համար. 1%-ից մինչև 12%. վաճառվում է եղբարց Յովհաննէսեանների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ. Тифлисъ, Нагорная ул., № 9. Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցէով՝ С. П. Мануэльянцу.

Գինն է 1 րուբլի։ Փօստի ծախս 21 կ. Գրավաճառներին զիջում կը լինի։ 56—150

Միայն ֆաբրիկային այդ մարկա կրելով, վաւեր է համարվում.

Huste-Nicht
Gerichtl. geschützt

ՄԻ՜ ՀԱԶԻՐ

Մեղրից և խոտերից պատրաստված մալց-էկստրակտ և կօնֆէտներ

Լ. Գ. ՊԵՏՇ ԵԻ ԸՆԿ. ԲՐՅՍԼԱՒԻ ՄՂԶ։

Քիմիական վերլուծութեամբ և բժշկական փորձերով ապացուցված է, որ այդ պրէպարատները չեն պարունակում առողջութեան համար որևէ վնասակար բաղադրութիւններ, և այդ պատճառով նրանց ներմուծումը Ռուսաստան և նրանց այդտեղ ծախելը թոյլատրված է։

ԳԻՆԸ. չիշը 1 ր. 25 կ. և 2 ր. 40 կ. կօնֆէտները 30—50 կօպ.։

Գլխաւոր պահեստ Ռուսաստանում
Վ. ԱՈՒԲՐԻԽԻ մօտ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, կոլոկօլնայա 18/19

Վաճառվում է Ռուսաստանի բոլոր դեղագործարաններում և դեղատներում։

5—16 (ամսի 10 և 25)

1892. XIV годъ.
ХУДОЖЕСТВЕННЫЙ И ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ЖУРНАЛЪ ДЛЯ ВСѢХЪ СЕМЕЙСТВЪ.
Съ пересылкой и доставкой. Безъ пересылки и доставки.
Годъ . . . . . 7 руб. Годъ . . . . . 6 р. 50 к.
6 мѣсяц. . . . . 4 » 6 мѣсяц. . . . . 3 » 50 »
За границу . . . . . 10 » Разсрочка не допускается.
ВВЕДЕНА ПРЕМІЯ ДЛЯ ГОДОВЫХЪ ПОДПИСЧИКОВЪ
РОСКОШНЫЙ АЛЬБОМЪ
„НОВГОРОДСКАЯ БЫЛИНА О БОГАТОМЪ ГОСТѢ ТЕРЕНТЬЯНЦѢ"
Текстъ, по кирѣевскому собранію
М. О. МИКЕШИНЪ
со множествомъ его оригинальныхъ рисунковъ.
Былина повѣствуетъ о томъ, что такое, подъ видомъ Недуга-Утина, томило молодую жену Гостя Терентія и чѣмъ была излѣчена эта болѣзнь къ общему благополучію.
Былина эта можетъ служить образцомъ безобиднаго русскаго народнаго юмора.
Запрос. прем. экземпляровъ высылается иногород. подписч. благовол. высылать 60 к. (можно почт. марк.).
Адресъ редакціи: СПБ., Троицкая, 10. За редактора—издатель Р. Томпе.

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

որը նշանակված էր յունվարի 12-ին, յետաձգվում է անորոշ ժամանակով, Զրօրհնէքի օրը պատահած աղետի պատճառով։ 1—1

Յունվարի 12, առաւօտեան 11 ժամին, Թիֆլիսի քաղաքային խորհրդի դահլիճում տեղի կունենայ „ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ" ընդհանուր ժողովի նիստը։

ՊԱՐԱՊՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ՝ 1) ընդհանուր խորհրդի և տեղական վարչութիւնների նախահաշիւների քննութիւնը և հաստատութիւնը. 2) ընտրութիւն ընկերութեան պաշտօնական անձերի՝ ա) խորհրդի հինգ անդամի և երկու փոխանդամի. բ) վերաստուգող յանձնաժողովի անդամների՝ խորհրդի 1891 թ. եւրմուտքի հաշիւները քննելու համար։ 1—1

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

ՀԱՄԱԶԱՍՊ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՕՐԲԷԼԻ

Սօլօլակակայա փողոց, սեփական տանը №№ 14—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ { առաւօտեան 8 ժամից մինչև 10 ժ. և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժ.

կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ։ 6—150

ՏՕՆԱԾԱՌԵՐԻ համար

ԴԵՂԱԴՐՕՐԾԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆ Վ. ԳՐԻՎՆԱԿԻ

Սոացաւ ահագին ընտրութիւն ԸՆԾԱՆԵՐԻ, ԶԱՐԴԵՐԻ և ամեն ինչ որ հարկաւոր է շքեղ և էժան ՏՕՆԱԾԱՌԵՐ սարքելու համար։ Պ.պ. օտարաքաղաքացիների համար կան մանրամասն ՍԱՐՔ ու ԿԱՐԳ մեծ և փոքր տօնածառերի համար, 5 րուբլուց մինչև 150 րուբլի արժողութեամբ, պատրաստ ուղարկելու համար։ կայ տնային բենգալեան կրակ. նոյնպէս կան պարֆիւմերական ժողովածուներ շքեղ արկղիկներում, ընծաների համար։ 8—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կաւկիա, վօրօնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան (և առամնացաւի) սիֆիլիսի և աչքացաւի
Դ. Գ. ԲՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Մ. Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց և երեխայոց ց.
Մ. Զ. ՔԱՆԱՆԵԱՆ—12—12½ ժ. կանանց ց. և մանկաբարձութեան։
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի ց.
Ա. Պ. ԿԱՐԱՊՏԵԱՆՑ—12½—1 ժ. ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Բ. ԱԼԵԿՍԷՑԵՎ—5—6 ժ. նեարդային ց. և էլեկտրաբուժութեան։
Ա. Մ. ՓՈՒԼԻՆԵԱՆ—5—6 ժ. երեխայոց և ներքինց.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ.
Ա. Ա. ԴԱԴՕՄՍԿԻ—6—7 ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուժութեան.
Վճար—50 կ.։ Համախորհրդի (կօնսիլիումի) համար առանձին։

4—52 (ֆ) Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ Նաւասարդեան

(տե՛ս շար. 3)

ՊԱՐՖՅՄԵՐԻԱ
ВИКТОРІЯ РЕГИНА.
мыло олео-вазелиновое
РОЯЛЬ-КОНГО.
ДУХИ ВЫСШАГО ДОСТОИНСТВА
ИСКОРОНАКЪ И ВІОЛЕТЪ.
О-ДЕ-КОЛОНЪ РОЯЛЬ
КОЛОНЪ ДВѢТОЧНЫЙ
ЗАКАЗЫ
РАЗНЫХЪ
Въ Высочайше утвержденномъ Товариществѣ торговли аптекарскими товарами въ Тифлисѣ и Баку.

ՊԱՐՖՅՈՒՄԵՐԻԱ-ԲՈՒԴՈՒԱՐ
ՎԻԿՏՕՐԻԱ-ՐԷԳԻՆԱ.
օդեկոլոնի տարբեր տեսակներ
ՐՕՅԱԼ-ԿՕՆԳՕ
ամենագործնական տեսակի մեծաքանակ սրվակներով
ԻԿՍԿԼՅՈՒԶԻՎ ԵՒ ՎԻՕԼԵՏ
ՕԴԵԼՈՆ ՐՕՅԱԼ
ՁԱՆԱԶԱՆ
ապրանքների մատակարարներ Վօյսկօվայա փողոցում, Ալեքսանդրեան տաճարի մօտ, Թիֆլիսում.

ԼՕՑՍ ՏԵՍԱԻ Ֆրանսերէնից հայերէն թարգմանված ԺՕՐԺ ՕՆԷԻ „ԴՕԿՏՕՐ ՌԱՄՕ" հեղինակութիւնը, մեծաղիր 375 էջ։ Գինը 80 կ.։ Թիֆլիսում վաճառվում է կենտրօնական գրավաճառանոցում։ Բաւում՝ եղբայրներ Բէզպարեանցի մագազինում։ Շուշում՝ Աբրահամեանի գրավաճառանոցում և Գաբրիանի մագազինում։ Ուրիշ քաղաքներից դիմել Թարգմանչին. въ Шушу, Никитѣ ХАНДАМИРОВУ. Գինը 1 ր.։ 5—6

Дозволено цензурою, Тифлисъ, 8 Января 1892 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.